

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ունէր արդեօք հայ դիպաբանութիւնն աստուած մը՝ գոյիչ և ուսուցիչ բժշկութեան ինչպէս առ Բոյնս՝ Ասկեպիոսը։ — մեր բոլորովին մթութեամբ պատեալ հնութիւնն ոչ զի կը նշանակէ այդպիսի արուեստի հնարօր, և ուրիշ ասորոգութեանց հետ կ'ուզէ ընծայել զայն ալ հայ ազգիս սիրելի Անահիտ աստուածոյն, իւրբն մայր բնութեան։ Այսինքն է որ հայ երեսուցիցութիւնն և կրօնից ուժն չուզելով և չսիրելով ընդունիլ բազմաստուածութեան թոհ բոհ մը՝ շատացեր է միով աստուածով՝ որ կա՛րող ըլլայ ամենայնի և մայր պարսնացեան ցեղին։ Այսինքն է մեզ ալ այս ձիւրի՝ զոր մեր ազգին կ'ընծայէ մեզ 'ի հնութեան, և ասով կրնամք զմեր նախնիս և զհարս մերձ առ աստուածածանօթ նախնայրսն մօտեցնել։ Սակայն եթէ չունենին աստուծին աստուած մը՝ նախնայր բժշկութեան, կ'ընդունէին և կը վարէին այն Ասկեպիոսով՝ որով և Բունաստան, և կային եթէ չունենային աստուծին և ասկեպիսանք, բժշկութեան արուեստին գործածողք։ Իսկայ այս արուեստն երկուր ժամանակ կրնամք ըսել որ լոկ անուն մ'էր 'ի Հայս, և բաական կը համարէին իրենց երկրին բնիկ բերող ծանօթութիւնն ունենալ և վարել այն բժշկութեամբ՝ զոր ռամիկն կը ստեղծէր և կը հնարէր առանց գրոյ և բառարանի։ Այս ռճն կը տեսնենք նաև յետ քրիստոնէութեան շատ դարեր որ թէպէտ կային մեքանոր լուսաւորողք զմեզ 'ի գիտութիւն, սակայն մեզն չէին արարծիր հեթանոսանալ և ոչ իսկ գիտութեամբ և գիտութեամբ նմանելով անոնց կամ անոնցմէ քաղելով։ Թուի թէ խիտն նուազ էր յառաջին դարս քրիստոնէութեան՝ մեր ազգին բժշկութեան վրայ ունեցած զաղասփարն, սակայն չենք կրնար ըսել որ բոլորովին զուրկ էր։ Կը տեսնենք յիսուսի շատ անուանք վերաբերեալ 'ի նոյն ուսումն, գոնէ այդ հին ժամանակներն, որ ճիւղարք յիշատակած են 'ի գիրս. քայց ցաւալին այդ է որ շատ անգամ խառնաբոլորութեան կոյտ մ'է և ոչ այլ ինչ։ Հօս չենք ուզեր կանկ անուոյն և քննել զայս, և քան ինչ, թացս պատմութեանս, ուր որ պէտք ըլլայ կ'ընենք մեր գիտողութիւնն նկատմամբ բառից խառնաբոլորութեան՝ զոր կը նշմարենք 'ի հին թարգմանութիւնս Հինգերորդ դարու։ Սակայն նոյն ծաղիկեալ դարուն մէջ թէպէտ չունենք մասնաւոր գիրք եր յորմէ կարենանք ժողովել Հայաստանի մէջ եղած բժշկութեան պատմութիւնն, քայց կրնամք զանազան մասն տեսնալու կարծիքն իմանալ իրենց գրութիւններէն։ Որինակ իմն, Գաւիթ՝ Նշապէսի, Եղնըկայ, Եղիշէի և Ղազարայ փարպեցոյ. և հասանական իսկ կը համարիմք՝ որ իրենցմէ առաջ

Գրիգորի Նիստացոյն (Գ. դար) գրած Մարտոյն կազմութեան վերջն ունենալով՝ իրենց անսխալ աղբիւր մը համարէին նոյն ժամանակին։ Ասոնց վկայութիւնքն ոչ են իրեն բժշկական վարդապետութիւնք, այլ սոսկ կարծիքներ, զոր ցիր և ցան կը գտնենք 'ի գիրս նոցա։ Եղնըկայ գիրքն աւելի ընդարձակ տողեր կ'աւանդէ մեզ, երբեմն և միւսներն ալ չորս հինգ տեղ միայն։ Ընդհանրապէս ծանօթ է սոցա որ մարդ 'ի չորից բաղկացեալ է¹. և թէ բուռաց արմատքն զորաւոր մաս մը բռնած են 'ի բժշկութեան². և թէ երակաց զարկն ինչպէս կ'ըլլայ³։ Շատ դարեր այսպէս հարեանցի տեսութեամբ գոհ եղաւ հայ դպրութիւնն, մինչև որ Ռուբինեանց թագաւորութեամբ՝ Հայք աւելի ծանօթութիւն ունեցան մեքանոր ազգաց և անոնց գիտնող հետ։ Մենք այս ժամանակս կրնայինք համարիլ գրեալ որ մէջի երեցած և ծաղկած բժշկաց և բժշկութեան պարագային, եթէ ուրիշ ծանօթութիւններ աւելի առաջ չմղէին զմեր տեսութիւնն, որով հարկ կ'ըլլայ մեզ գրեալ որ զար բժշկականութեան գինն 'ի մեզ Գաղիայ թագաւորութեան ժամանակն, որ հաւանականաբար՝ Գաղիկ առաջինն էր։

Ութերորդ և Իններորդ դարոց, և անկէ ալ վերջն Արարացոյց տուած միւս ցնցումն՝ որչափ օգտակար եղած էր բոլոր իսկ աշխարհի, սակայն աւելի եղաւ Հայոց համար՝ որ նոյն ժամանակներն հրաշալի ձեռնարկ ար բրին գիտելով յարաներան գիտութիւն, և անոր ժողովելով և լուսաւորելով զՀայաստան։ Փառնի պէտք լի էր հայ ազգին՝ յԱրարացոյց կրած նեղութիւնք և հարստահարութիւնքն ըստ քաղաքական մասին. քայց կրնամք բոլորովին հակառակ բերումն ունենալ այն ուսումնական յարարութեանց համար, զոր ունեցեր են մեր հարք ընդ Արարացիս։

Այս նորօրեանկ մոման նկարագրութիւնն կ'ընէ մեզ արդի հմուտ գրիչ մը, որ արարական բժշկութեան պատմութիւնն աւանդած է իմաստնոց. « Աշխարհս միանգամ միայն տեսած է այն զարմանալի տեսարանն, կ'ըսէ, զոր « Արարացոյց կ'ընծայեն մեզի իմաներորդ դար. բու. այս Աշխիւ ժողովուրդն, զոր բոնից է, և անոնքն յանկեալ աշխարհիս կէս մասին տէր « բարա, մէկն և թագաւորութիւն տասնաւոր, « ինքն զինքն տուաւ գիտութեան, որ միայն « կը պակսէր իրենց մեծութեանն։ Ութերորդ

1 « Գանգի մարդոց մարմնն 'ի չորից տարբեր խառնեալ է, 'ի խոնավութենէ, 'ի ցամաքութենէ, 'ի քրտութենէ և 'ի ընթափութենէ... » Եղնիկ. 80, 81։

2 Եղնիկ. 66, 67։

3 Երակաց վրայ. Եղնիկ. 197։

« դարու վերջիլը՝ իրենց բոլոր ուսումնական
« հարստութիւնն էր բժշկութեան գրքի մը
« թարգմանութիւնն և բխիարստութեան գրք-
« քեր: Իսկ թէ դարն դեռ չանցած՝ Արաբացիք
« արդէն ստացած էին բոլոր Յունաստանի
« գիտութիւնը, ունէին աւալին կարգի իմաստ-
« տուններ, և անոնք մէկէն իսկ՝ արնոց նը-
« մանեցան՝ այնպիսի անձինք յարուցին, որք
« առանց իրենց՝ մթութեան մէջ բնկած կը
« մնային, և ցոյցին այն ժամանակէն ի վեր
« ճանարտ գիտութեանց մշակութեան համար
« մեծ յարմարութիւն մը՝ զոր չունէին և ոչ
« անոնք որոյնք ստիպեցան և յաղթեցին » 1 :

Արաբացիք, նկատմամբ բժշկութեան, շատ
բան ի Պարսից առած են, ինչպէս յայտնի
ի իննեք զայս և շատ բուռն և դեղով անուանը-
նալ իրենց մասաորական արթննալու ժամա-
նակն կրնամք համարել է՝ դարն, յորում մէկ
ուժով սկսան ի քանաստեղծութիւն և ի
բժշկութիւն միանգամայն . ստով ի՛մանցուի
այս կրակացայտ ազգին իմացականութեան զո-
րութիւնն :

Յետեւորդոք դարու՝ բժշկութիւնն դեռ կը
ծաղկէր յաղեքսանդրեան դարոցի, երբ մաս-
ժեցին այն աստեղ ասանձին դարոց մը հաստա-
տել այս ուսման համար, և իրենց առաջին
գիրքն եղաւ Պարսիստի գրոց հաւաքում մը :
Ասիկց անցաւ բժշկութիւնն ի Պարսիստ և
այլ և ուլ կողմանս արեւելից, որ կոնգ-
նեալ էին և համալսարաններ և հիւանդանոց-
ներ ի կրթութիւն բժշկաց և զարգանելու
այն արուեստս : Այս ուսումնասիրութիւնն
տեղեք բաւական ժամանակ յորս երբեմն թարգ-
մանութեամբ ի յունէ և երբեմն ինքնին
յորինքով գրքեր՝ միշտ ունեցաւ իր ծաղկե-
լանդոցքը : Արաբական արաղոտութիւն մը պէտք
չէ բնութեւն մեր մատենագրութեան մէջ, այլ
պարզապէս նմանութիւն կը կամ զարգում մը
անոնցն, սակայն ոչ ամենեւին զուրկ է մերն
այ ասանձին վարդապետութիւններէ : Որոնք
են ուրեմն՝ որ մեր դարսութեան մէջ բժշկու-
թեան անուանս արժանի անձինք եղած են :
Առանց մասնաւոր անուանց ի՛նչպար, բնդ-
հանրապէս կրնամք բռել որ Հայաստան ալ
հանած է իրմէ այնպիսի բժիկներ, որ իրենց
կեանքն անդուցած են ի հիւանդանոցս, թա-
գաւորաց պալատներու մէջ, աշխարհքէ աշ-
խարհք հանապարհօրդելով՝ բժշկութեան ա-

նուան և պատուոյ համար . բայց երբեմն նաև
օտար կամ արաբացի բժիկներ՝ որ յարեւնիս
Հայոց կը գտնուին, կը դարմանեն Հայ թագա-
ւորաց հիւանդութիւններն և անոնց դեղեր և
կանոններ կը պատուիրեն : Մոհամետէս իտտին
Իպնէ Հօրալ պալատապետ, որ ծնաւ ի 1122, Հա-
յոց իշխանի մը բժիկն եղած ի րաուի, և հօն
շատ հարուստացած է . հեղինակին վկայութե-
նէն կրնանք գուշակել որ Հայոց արքունիքն
մի ի ճոխազուռնից կրնար համարուիլ, և հար-
կաւ աննպակաս էին հօն ալ արաբական ընդ-
գութիւնքն : Ասոր վկայ ո՛րի մ'ալ մէջ բերենք,
նշեալէս արարողի, զոր Հայաստանի հարս-
տութիւնն իրեն կը քաշէ . այս էր Գոստաւ պէն
Լուսա ի Պապպպէքէ, որ Հայոց համար գանա-
րան գրքեր ալ շարադրած է 2 : Մեր հեղինա-
կաց մէջ ալ կը գտնենք ասոր օրինակներ,
որոնք աւելի հաստատուն ի իննէ մեր վերի
լուածն . երբեմն կը յիշուի Յախաէ բժիկին, որ
թերեւս անձնակա՝ բժիկին էր Գրիգորի Մա-
գիստրաի, և անոր համար մասնաւոր նուա-
խաց (recette) տուած է՝ զոր ունինք մեր ձեռ-
քն և զոր պիտի դնենք յնիշաց պատմու-
թեանս : Ուրիշ տեղ մ'ալ կը յիշուի ժեր բժիկ-
որն պաղդորոցիմ որ Հէթում թագաւորին մի-
շացաւ . և կորնի հիւանդութեան նուախաց
մը ասանդած է մեզի : Կարելի է արդեալ կար-
ծել որ այս ժեր բժիկին վերի ըսած Պաղտատ-
ցին հետ նոյն ըլլայ . զայս կը թողուք ուսու-
մնասիրաց տառաչելու :

Գուրով Հայ բժկաց, մեր գլխաւոր խօսից
նիւթն պիտի ըլլան՝ Հին բժկարանն, որ Գագ-
կայ ժամանակ թարգմանուած է ի տանէլ,
Մխիթար Հերացին, Ալիքսանդրաթ, Ասոր Սե-
բաստանը . ասոնց գործերն կամ գրքերն ու-
նինք ձեռքերինս . սակայն կան ուրիշներ ալ՝
զորս միայն յանուանէ գիտենք, որով չենք
կրնար սննսխալ գաղափար մը յինչ ասոնց
գրութեանց ոճին վրայ . այս դասակարգէ է
Պուրեսաթ Սեբաստացին, որ Ալիքսանդրաթ
մեծ բժկարանին զլուի մը բանի տուած է, և
յետոյ իր յիշատակարանն կը դնէ այսպէս .

Այս ես Պուրեսաթ սեբաստացի բժիկն անուամբ,
որ ի յարեւմտ եւ աշխատեք իման տնէնմար,
Ձեռք առաւեմ, ո՛վ որ կարգապէս սակաւ զգայ բան,
Ձեռք անարժան Հայր մեղայն ասեմք արժան :

Իսկ դրած գլուխ մը բանին ունի այս վերնա-
գիրս . « Խորատ վարդապետաց որ ասացեալ են

1 Mohaddeb Eddin ben Hotal, el Bagdady . . . pendant
quelques années il fut le médecin du prince de Khatat en Ar-
ménie, et il acquit là des grandes richesses. (Hist. de la Méd.
Arabe, tome II, 141.)

2 Costa ben Luca Balboky, il fut plus tard attiré en Ar-
ménie par un prince du pays du nom de Sendjarib. Là il ren-
contra aussi le patriarche El Bathrig, pour lequel il écrivit
divers ouvrages . (Hist. de la Méd. Arabe, tome I, p. 157.)

Այս անն յոյն է, բայց չգիտցուի թէ որ ժամանակն
կ'ընայ, հասնորեմն զ՝ դարու առաջին կեսուն մէջ թե-
րեւ հեղինակն el Bathrig կոչուած սոսկ պատրիու-
թեամբ պատուեալ իշխան մը նշանակէ հօս :

4 Le monde n'a vu qu'une fois le spectacle merveilleux que
les Arabes vont nous offrir au IX siècle. Ce peuple de pasteurs
que le fanatisme a rendus soudainement les maîtres de la mo-
tiété du monde, une fois leur empire assis, tout aussitôt se
préoccupent d'acquies la science, qui manquait à sagrandeur.

A la fin du VIII siècle tout leur bagage scientifique connu
se réduisait à la traduction d'un traité de médecine et à des
livres d'alchimie.

Le IX siècle ne s'écoulera pas que les Arabes n'aient en
leur possession toute la science de la Greco, ne comptent par-
mi eux des savants de premier ordre, n'aient suscité parmi
leurs initiateurs des hommes qui, sans eux, croissaient dans
l'obscurité, et ne montrent dès lors pour la culture des scien-
ces exactes, une aptitude que n'eurent pas ces mêmes initia-
teurs, désormais dépassés. (Hist. de la Médecine Arabe, par
le Dr. Lucien Leclerc. tome I. p. 91, 92.)

այսպէս արտայայտուող » և զայս քաղցրով կը դնէ 'ի Գաղղիանոսէ և յուպոկրիտոսայ թէ տըպէս կարելի է երեւել թո՛ղի ըլլայ: Իսկ Ասար սեբաստացին իր բժշկարանին մէջ կը յիշատակէ Բարդողղիմէոս անունով մէկը, և իրեն փորձ մ'ալ կ'աւանդէ այսպէս. « Սառ տէր « Բարդողղիմէոս 'ի Հռոմ քաղաքն, թէ դիմար « Հիպոկրէ էի և ինքնառ, գինով լոկցուցին և « Հայկիսայ սպարկ իրցեալցին, պոռակեցայ և « քրտնեցայ և լուցայ ողորմութեամբն Սը « տուծայ »:

Ասոր հետ կը յիշէ Սասը՝ Ստեփանոս անուանով բժիշկ մ'ալ և կ'ըսէ. « Վասն բլտանկ « ցաւոյն, որ է ձաւկն. — Տիմէոս հատածի, և « գրէ Ստեփանոս բժիշկն թէ այս գորաւոր է « քան զայլ առնեսայն ղեղերդ ». սպա գնուա խոյն տիմէտի (խարանք) կը գրէ. ուրիշ տեղ մ'ալ դարձեալ կը յիշէ Ստեփանոս այսպէս. « Հապ լուծման, և շատ ոգտութիւն « առնէ, զոր ես Ստեփանոս փորձելի պլնով « արեղայի և ծերի և կարճի. առ ղեղին Հայի « լայ... և այլն»: Բայ յատեն կը յիշատակուին և այլք, ինչպէս Յովհաննէս, Դեղին բժիշկ, և Գրիգոր Չուրպեցի՝ զոր կը յիշէ յանուանէ Ասկրտովաթ բժիշկին, և բժշկարանին Ասկրտովաթայ՝ առաջինն կը կոչուի Յովհաննէս հաւկիս, և կայ ուրիշ մ'ալ Յակոբ յժիպղետն, ուրիշ գործերն յունենք¹, որուն փորձիկ պատուիկ մը ղերծած է ժամանակէն և մեզի հասած: Չայս Ասկրտովաթայ բառադրոց մէջ պիտի տեսնենք յիշուած, ինչպէս են Ճոյին, Սիմանն, Ստեփանոս իւր ընտանեօքն, Վահրամ, Սարգիս: Ի 1438 թուին (ՊՃէ) հետեւեալ յիշատակարանն կ'ընթեռնենք տեղ մը. « Ընդ նմին և ղկաղմն տուողս զՅովհաննէս Հաբիմս և ղՀայրն իւր ղՀանգուցեալն 'ի Քրիստոս զվարպետ Սկանտարն յիշեալիք »:

ՍԼԻԲԵՐԲ ՀԱՅ ԲԺՇԿԱՐԱՆԱՅ

Երբ ձեռքը ունեցած Հայերէն բժշկարաններն գրեթէ քաղուածոյ մը են, և ոմանց հասարակականք ըսել թէ նաև զանազան ժամանակ

1 Չատեր կոչանք զանեւ որ հայ բժիշկներ են. բայց հաս ուրիշներ ալ զորս չկցանք ճշգրտել թէ արդեօք հայ են թէ ոչ: Ինչպէս են Աճարն, Սիմեոն բժիշկ, (վան ղի ղոյն անունով բժիշկներ կը յիշատակուին և առ Արաբաին, Ահրուն, Չարուն, Աճարն. այսպէս է և Մարդպան բժիշկ, զոր յիշատակէ ուրիշ բժշկարան մը: Վասն ղի այսպիսի բժիշկներէն շատն քրիստոնէայ էին և նեաւ տորականք, անով անունին ալ ըստ յոյն ղոյնն կը յորբորէր. ինչպէս 'ի Հակոսակէ երբեմն քրիստոնէայ բժիշկներ արաբացի հնամայր կը դրօշմէին գրեթէ. Ինչպէս Յեսու բժիշկ որ կուռեր իւլէ. Իսող և Յեսու: — Աւելորդ կը Համարեն երկայնեւ խօսքերնս ամենածաւ. Խօթ բժշկաց զարուց և զօրծոց զիս, զորոնք ընթերցողք կրնան գիտաւ զանեւ 'ի զիս հմտագունից, որոնք պս փերթն տարներնս հրատարակեալ են յԵրուսալ: Այս ծանօթ Հեղինակներէն կը համարենք զԽալպոկրատ, ըզ-Փաղեանոս, զՈրբատ, զՌուփոս, որոց բժշկական գրութեանքն տպագրեալ են 'ի Փարիզ՝ զիտական անձանց ընթերց, որպիսիք են Տարանդէրէ և Լիգրէ և այլք: Իսկ ուրիշ անանին տեղեւոր թիւանքն պիտի գնենք երբ իւրաքանչիւր բժշկարանաց վրայ զատ զատ խօսենք:

նակ գրուած և զանազան անձինքն'ըէ. սաւ կայն ընդհանրապէս արարական են ամենքն ալ, ինչպէս կը վկայեն բժշկաց անուանքն և ղեղուն և անոնց կերպերուն և բժշկական բաւերուն անուններն: Դաւն այն բժիշկներուն որ յոյն են՝ մեր նախնիք արաբական թարգմանութենէ առնելով՝ արաբացի Հնունս տուած են, ինչպէս Խալպոկրատէս երեւելի բժիշկն և ղաժ է մեր բժշկարանաց մէջ Պուրատ, Բուկրատ, Բապրատ. — Գաղենոս, Գլիսիանոս, Ճալինոս². — Ռուփոս, Բուպոս, Բուպոս, Բուպոս, Բուպոս³. — Որբատ, Ռուբատ, Սարպիա սուս⁴. — Ալիւղեպէս⁵. — Դիմոկրատոս⁶. — Փօթոս, Դիոս, Դիպոս, Դիպոս⁷. — Արճիհաւ նիս, Արճիաուս⁸. — Մարտիոս⁹. — Պըղդատոս¹⁰. — Դեհանիս¹¹. — Սնտարունախոս¹². — Յետ այս սոկաւ յունեանն աղբերց, կը զտնենք յիշատակելու շատ արաբացի բժիշկներ, որոնցմէ անմար շատ ծանօթ են աւարակական դպրութեան մէջ և ոմանք սակաւ. այսպէս Հետեւեալքն:

Սալիկէ կուտան, Սալիկէ զուրան. կայ և Սալիկէ կուտայի որդին.

Մուհամմատ Չաքարիային որդի, կամ լոկ Չաքարիային որդի, կամ Մահմատ Չաքարիայի որդին.

Մանէ, Մապիային որդի, Մասուպին որդին, Իպի Մասուրիան.

Թանատուղ, կամ Թատուղ, Թանատուի.

Սինեայ որդին, կամ Իպի Սինեայ, կամ Ապու յալիսին? կամ Սինային որդի.

Յեսու բժիշկ կամ Խաղ?

Մուսիպին Մայմուն.

Իօսման.

Սահկ?

Բանեայ, Եհանեայ, Էհանան.

Հունան, Յունայն Խալիսի որդի,

Իպի Յապուտան կամ Հապուտին որդի, կամ Իպի Ապուտան.

Ապուտարեւ.

Մատույն բժիշկ կամ Մատանէի բժիշկ կամ Մէտանին.

Ապոյալին.

Ապուրիստան.

Բաղիկ կամ Ռազկան որդին.

Պատեհին?

Միլուս?

Մարտուտան, Մարտուճէլէ, Մարսուէ.

Ահարմ?

Պաղատանցին, ծեր պաղատանցին:

Այս անուններէն ամենուն ալ ստոյգ տեղեւորութիւն չենք կրնար տալ ուսումնասիրաց,

1. Գաղենոս, Գաղենոս

2 Rufus.

3 Oribase.

4 Asclepius.

5 Democritus.

6 Paul d'Egine.

7 Archigènes.

8 Անձանօթ մեղ բժիշկ.

9 Diogène.

10 Andromachus.

բաց անոնց՝ զոր՝ կրցանք նշանակել 'ի գիրս պատմարանից, և այն ալ շատ անգամ տարա-
կուսական: Անոնց գրոցն տեղեկութիւն ու-
նենալ ցանկացողներն կը զրկենք Արարացի
Բժիշկութեան Պատմութեան գրքին. (Hist. de la
Médecine Arabe, par le Dr. Lucien Leclerc).

Բայց 'ի սոցանէ կը յիշեն մեր բժշկարանքն
զՀստակ իմաստաստիքին, Պարսիկ գիրն, Պարս-
իկի Գիտնաշարն, կամ Թէ՛ ասագիրն են, ասա-
ցած է, և այլն: Եթէ է այս կաշուաներն չառնեն
գեղեցորայս յինելու, կը զրկէ շատ անգամ 'ի
Հոգախառնիքին, և 'ի բա՛ւ. զոր գրած է յախրա-
պատն կամ յաղրապատն: Եւ այս բառն է կը նը-
շանակէ դեղագործութիւն՝ ինչպէս գեղեցիկ չի-
նսած են ոմանք փոխանակ pharmacopée բա-
ռին:

ԼԵՃՈՒ ՀԱՅ ԲԺՇԿԱՐԱՆՔ

Մեծ օգուտ մ'ալ հայ լեզուի բերած են մեր
բժշկարանքն, և ընդ ուսման՝ կարծես և լեզու-
նիս ալ ոչ սակաւ ճոխացած է: Մտիպուած էր
իրաքանչիւր բժիշկ համառօտ, յոտակ և ճիշդ
բացատրել իր ուսումն, որով հարկ կ'ըլլար ինք-
զինքը 'ի չափու տնէն: Բայց որովհետեւ բա-
ւոց հարուստ գործածութիւն չկար, կը հար-
կազրին շատ անգամ մտցնել, երբեմն և չարիէն
ալ աւելի, օտարազգի բառեր խառնակեալ
հնչեմամբ. որով կրնամք ըսել որ շատ անգամ
բառից բարեյուն մ'են մեր բժշկարանքն: Կը
տեսնուի հօն հնդիկ, պարսիկ, արաբացի, ա-
սորի, տաճիկ, յոյն, լատին բառից մթերել, մը-
այս բառական է, նաեւ շատ մը գաւառացի
բառեր անպէտ 'ի գործածութիւն: Շատ բա-
ւեր ունին իրենց թով նշանակեալ և հայեցի
բառն, բայց ալ աւելին տաանց հայերէնի է.
և ասով հիմալ աղիպուած ենք նոյն օտարազ-
գի բառն գործածել առ 'ի չզուի հայեցոյն:
Միակնայ յայտ՝ մեղադրելի չենք կրնար համա-
րիլ մեր նախնիքն, որովհետեւ առաջին միջումն
մէ՛ էր՝ զոր տուած էին հայկական ոգւոյն և
անկարելի ալ էր որ ամեն երկրի յատուկ բեր-
քերուն կարենային սեպհական հայ բառ մը
ստեղծել. զայս ալ խառնուաներ է՝ որ շատ
անգամ աղիտութենէ յուսով եկած էր այս,
վասն զի մեր հայ բառերուն շատին նշանակու-
թիւնն որով չէին գիտեր, և այս ամենէ յայտնի
է՝ որ մէկ բառի տեղ չորս հայ բառ նշանա-
կուած կը գտնենք, և մենք ալ կը չփոթինք
թէ ո՞րն է ընտրելին 'ի նոսա: Այս աղիտու-
թիւնն, դժարադարար, մինչև մեզի ալ անցած
է իբրեւ Ժառանգութիւն. և ամենէն իսկ հիմուտը
չեն կրցած հաստատուն որոգողութիւն մը ընել
այս մասին: Արդ դարման մը միայն կրնամ
մտածել, հայկական բառից ճշգրիտ ստուգաբա-
նութեանն դիմել, և ընտռել թէ՛ այս ինչ կամ
այդ բառն ո՞ր ինքուէ ծագած կրնայ ըլլալ, և
ե՞րբ մտած մեր լեզուին մէջ: Այս ալ կարե-
ւոր կը դաստիգ արեւելեան լեզուներն՝ որոնք
շատ հարստութիւն անցուցած են 'ի հայ բար-
բառն, եթէ՛ ոչ բառ՝ գունէ շատ անգամ նոյնա-
նիշխառ մը, կամ թէ՛ լաւ ևս ըսած, օտարազգի

նշանակութեամբ 'ի հայ թարգմանեալ բառեր:
Տարակցս չկայ՝ որ հինգերորդ դարու թարգ-
մանութեանց մէջ գործածուած բառերն, մա-
նաւանդ անոնք՝ որ բուսաբանութեան և կեն-
դանարանութեան կը վերաբերին, շունին այդ
ստույգ նշանակութիւնն՝ զոր ունին 'ի յետին
բժշկարանն մեր. ասով կրնամք 'ի ձեռն բերչ-
կարանաց լաւ ևս ստուգաբանել և լուսարա-
նել լեզուիս հին բառերն: Եթէ՛ երբեմն այդ
բժշկարանքն ալ իրարու համահայն չգտնենք՝
գարմանը չէ, այց այն ստուն պէտք է իմաստնա-
գոյնն ընտրել 'ի նոսա և անոր հետեւի: Ի՞նչ
կարանաց ստուգութիւնն շատ անգամ անսխալ
է, արովհետեւ մեր առջև արեւելեան անբառ հա-
րստութիւն մը կը բանայ, և անով կրնամք
քննել և ճշգրտել շատ բան: Զասոնք կրնան
ուսումնասէլք տեսնել այս գրութեանն մէջ՝
երբ հարկ ըլլայ դնել մի առ մի բժշկական բա-
ռագիրներն և անոնց մեկնաբանութիւնն:

Քերականական կանոնաց նկատմամբ ալ
շատ ո՞ն և կերպ կ'ընծայեն մեզ բժշկարանք, և
կրնամք դաստարգիլ գտնողք ընդ մէջ գրաբա-
ռի և արդի աշխարհիկ խօսից: Ոչ հին լեզուի
կամ գրաբառի ծանրութիւնն կը տեսնուի հօն, և
ոչ հիմակուան աշխարհաբարին ազաւաղու-
թիւնն և խառնակութիւնն: Բացատրութեանց
կրագութիւն մը ունին, բառից որոգողութիւն և
յուստութիւն. որով ըստ մեզ՝ շատ աւելի յարմար
է 'ի գրութիւնն քան գրաբարուն և քան զաշ-
խարհիկ բարբառ: Երբանիթէ օր մը այս ձեռ
կարենար առնուլ մեր Հիմակուան խանգա-
րեալ դասիգորէնն: Է՛նտի յօտարաբանու-
թեանց կամ յօտար լեզուաց ազդեցութենէ,
հայկական լեզուի պայծառ և սիրելի կերպ մը
կ'ընծայէ մեզ: Կը տեսնենք հօն հայկական
բառից ստույգ գրութիւնն, որ Ժամանակաւ
խանգարած է մինչև առ մեզ, օրինակ իմն, ինչ-
պէս կը գրէին ասոնք մեր դրիւն բառն. այս փո-
փոխութիւններն կրած է բառս ըստ ժամա-
նակաց, յաղարկել, յղարկել, յղրիկ, ողոր-
կել, որրիկ, յրիկ. և միթէ՛ աղէկ չէ՝ դառնալ
միւսանգամ գրել յղարկել, յրիկել, ընդ մէջ
գրաբառի և աշխարհաբարի: Այսպէս իմա՝
ըլլոր բառից գրութեան նկատմամբ, որոց օրի-
նակք են մեր բժշկարանքն. դենք փոքրիկ օ-
րինակ մը 'ի բժշկարանէն՝ Սալարի, երբ կը
բացատրէ առ Մանեղաշիս Հիւանդութեան
պատմութիւնն. « Ուրաքս բժշկուպետն ա-
սացանք է թէ՛ 'ի պղտալէ լինի և յարենէ
և իրաւ է. զի իւր նշանքն այն է՝ որ երբ մար-
դն գլխաբալուրն ուսէ՛ չկարէ հայել: և թէ՛
շատ ուսէ՛ և թէ՛ սակաւ կըտնորն ուսնի: Եւ
այնց լինի որ չի հաւատայ թէ՛ իւրն բժշկու-

1. Արեւաց մէջ միակ այս լեզուի փոքր փոքր և քա-
ջանելի կերպով յաղարած է մ: 2. Գևորգ Մ. Անշուն.
որովցուած է՝ թէ՛ որչափ աւելի յարմար և բանաս-
տեղական թափնէր բացատրուալ այս լեզուն քան ըզ-
գրաբարն և քան գաւաթօրէնն շատ տեղ: Վկայ են ասոր
անմահական հանձնարքն գրած թերթուածներն 'ի սոյն
լեզու. և ինքն և զարմեալ որ առաջին սկսած է գործ-
ածել լաւ մասնիկն, որ սկզբնական է և ժամեկին այս տե-
սակ գրուածաց մէջ:

Թիւն լինի, և զինքն կախարդած գիտենայ
կամ զեղած և ոչ բժշկի հաւատայ և ոչ զեղի,
և այնք գիտենայ թէ կամ վաղն մեռանի կամ
երիկունն, և նեղի և տապի, և ձգեռտուկն
զայ ժամ մի թթու և ժամ մի հոտած և
ձկնահամ. և ժամ մի հանց գիտենայ թէ
արեւահամ ընդ բերանն 'ի դուրս է 'ի
գալ. . . : Իւ բժշկապետներն զայս ցաւոյս տե-
րն Ստամբուլսանկար կոչեն, և երբ այդ
ցաւս 'ի լոյս ելանէ, մարդոյն քուն վատ գայ,
և ոտս ընդ ոտս գայ 'ի քանն. և երբ լինի 'ի
քունն իւր հանց թփնայ թէ 'ի մութն տեղ
եմ, և այլ թփի թէ 'ի բարձր տեղաց 'ի վայր
է անկանել, և կամ 'ի ծովու մէջ կայ և կամ
'ի նեղ տեղ կայ: Եւ ասացեալ է Ռուբաս թէ
մարդ մի կայր որ զինքն 'ի տանէն 'ի դուրս
չկարէին հանել. և երբ ասկին թէ ել 'ի տա-
նէս, նա ասէր թէ ինչ ցեղ երևեմ, երբ երկին-
քն 'ի վրաս է փրել և զիս 'ի ներքե է յար-
գելել. . . : Զի յառաջին ժամանակին մարդ
մի եղեալ է այս ցաւոյս տէր, և ասէին թժշ-

կապետներն թէ նշանք տուր քո ցաւոյս, նա
խօսէր ոչ. երբ ողջացուցին՝ հարցին թէ յէր
չէր խօսել, նա ասաց թէ ինչ ցեղ խօսէի երբ
լեզուս ապիկի էր, թէ խօսելի կոտրէր: Եւ
մարդ մի այլ կայր յիմ ժամանակն և կարծէր
թէ անգլուխ եմ, բայց բժշկապետներն ճարտար
էին, յարձնէ սաղաւարտ զուգեցին 'ի գլու-
խին եղին, և երբ 'ի գլուխն ծանդրացաւ ապա
գիտաց թէ գլուխ ունիմ. . . »:

Ուրիշ նման օրինակներ դեռ կը տեսնենք
յրնթացս պատմութեանս, թերեւ քան զայս
գեղեցիկ և աւելի յարգարուն:

Գալով դեղոց, բուսոց և հիւանդութեանց
անուններուն՝ մեծաւ մասամբ արարացի բա-
ռերն կը գործածեն մեր բժշկարանք. երբեմն
և մարդակազմութեան բառերն ալ յորս կը
սպակի հայերէնն:

Իր շարունակութիւն:

Հ. ԱՐՄԵՆ ՍՈՒՐԵՆԱՆ

ԱՆԴՐԷԱՍ ՎԱՐԺԱՊԵՏ

✱ Հանգոռցեալ 'ի Սիմֆերոպոլ Տաւրիոյ, 1856 Մարտ 13.

Հայաստանու ցրուեալ որդիւր՝ թէ-
պէտ և օտար 'ի հայրենի օփանց, հե-
ռաւոր աստեղաց ներքե ծնանին և
մեռնին, սակայն միշտ իրենց դարերով
կոկուած միտքն և ազնուայած զգա-
ցմունքն հետեւին անբաժան ունին.
չեն կրցած ոչ Պարսից, ոչ Արաբացւոց
և ոչ Բրդաց սուրբ և երկաթն բխա-
ցընել Հայոցն կիրթ միտքը և բրտա-
ցընել ազնուական զգացմունքներն:

Հանճար՝ որ ճաճան մ'է երկնա-
ռաք, որ եթէ իջնայ մէկու մը վրայ,
կը բեղմնաւորէ անոր միտքն և գեղե-
ցիկ և շահեկան արգասիք կը բոխեն
անտի, սակայն սոյն այս երկնաւոր ճա-
ճանը կ'ուզէ իրեն պատրաստուած և
մաքուր տեղ կամ ենթակայ, որոց
վրայ խաղայ կամ իջնայ. ինչպէս շա-
հեկան մայիս ամսոյ անձրեր մաքուր և
պատրաստ դաշտավայրին վրայ, ո-
րոյ ծոցն սերմանիք արդէն յայնան
ձգուած են: Պարսիկներն և Բրդերն և
այլ շատ ասիացի ժողովուրդք, զեռ տա

անկարող են գեղեցիկ դպրութեանց և
արուեստից ճաշակն առնուլ և արդիւ-
նաւորել, այլ Հայն, ըստ խորնոյ ծե-
րունւոյն, քան զամենայն արեւելայս
գերագոյն, հաւասար Եւրոպացւոց ընդ-
ունակ է հանճարոյն ներշնչանց.
վկայ են խօսքերուս, ինչպէս գեղեցիկ
դպրութեանց, նոյնպէս և գեղարուես-
տից մէջ երևելի եղած Հայերը: Հաւա-
նական է կարծելը որ շատերն ալ ան-
յաղթելի պարագաներէ շրջապատեալ,
աստուածատուր հանճարնին 'ի խան-
ճարոց 'ի գերեզման տարած են՝ ան-
ժանօթ մնալով ապագային՝ նոյն և ժա-
մանակէից, թերեւ և անձանց իսկ:
Դիտելու արժանի կէտ մ'է, որ ցայս
օր լուած չէ հայ երգահանի մը շա-
րագրութիւն՝ եւրոպական նշանադրոյ-
միւք (note), որ նշանակութիւն ունենայ
Եւրոպայի դիմաց, թէպէտ և չենք տա-
րակուսիր, որ հին Հայաստան ունեցած
ըլլայ իւր հայ երգահաններն, որք եր-
գած են զփառս հայրենի աշխարհին և